ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1956 Общественные науки

Վ. Ներկարարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գոյության ու պայքարի պատմությունն անխզելիորեն կապված է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի հերոսական պատմության հետ։

Հայաստանի Կոմպարտիան իր կազմակերպական ձևավորումն սկսեց 1920 թ. մայիսից, բայց այն բավական երկար տևեց։ Կատարվեց պարտանդամների և թեկնածուների ցուցակագրություն, ձևավորվեցին սկզբնական պարտիական կազմակերպությունները, շրջկոմներն ու գավկոմները, տեղի ունեցան պարտկազմակերպությունների համապատասխան կոնֆերենցիաներ, անցկացվեց պարտշաբթերի զտում, գավառային պարտկոնֆերենցիաներում ընտրված դելեգատները եկան ՀԿ(բ)Պ առաջին համագումար, որտեղ և առաջին անգամ ստեղծվեցին ընտրովի պարտիական վերադաս օրգաններ։ Ահա միայն այդ ժամանակ դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների հիման վրա, վերջապես, կազմակերպական լիակատար տեսք ստացավ Հայաստանի Կոմունիստական պարտիան՝ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի մարտական ջոկատներից մեկը։

* * *

Հայաստանի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարը տեղի ունեցավ 1922 թվականի հունվարի վերջերին։ Համագումարը հրավիրվել էր պատմական այն ժամանակաշրջանում, երբ ռեսպուբլիկայի աշխատավորությունը ուս մեծ ժողովրդի օգնությամբ, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ՝ տապալելով գաշնակների և նրանց անգլոամերիկյան տերերի արյունոտ լուծը, թևակոխել էր խաղաղ տնտեսական շինարարական շրջանը և սկսել էր իր նոր, երջանիկ կյանքի կառուցումը։ Այդ այն շրջանն էր, երբ Հայաստանի աշխատավորությունը, շնորհիվ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ճիշտ քաղաքականության, քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ ձեռք էր բերել առաջին հաջողությունները ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ արդյունաբերության, տրանսպորտի, առևտրի ու ապրանքաշրջանառության բնագավառներում, երբ ՌԿ(բ)Պ 10-րդ համագումարի որոշումների հիման վրա ռազմական կոմունիզմից անցում էր կատարվել դեպի նոր անտեսական քաղաքականությունը և առկա էին այդ քաղաքականության առաջին դրական արդյունքները։

Ռեսպուբլիկայում 1921 թ. վերջերին և 1922 թ. սկզբին անցում էր կատարվել իշխանության նշանակովի մարմինների՝ ռևկոմների սիստեմից դեպի ընտրովի Սովետների սիստեմը, ստեղծվել էին ընտրովի պարտիական օրգաններ։ Արդեն ավարտվել էին առաջին հաշվետու ընտրական ժո-

ղոմները պարտիական կազմակերպություններում, ավարտվել էին շրջանային ու գավառային պարտիական կոնֆերենցիաները, տեղական Սովետների ընտրությունները և Սովետների շրջանային ու գավառային համագումարները։ Այդ ամենը տեղի էր ունենում Սովետական բոլոր ռեսպուբլիկաների ներքին ու արտաքին գրության հարաճուն ամրապնդման պայմաններում։ Սովետական Ռուսաստանն այդ ժամանակ թևակոխել էր իր գոյության 5-րդ տարին, առկա էին ՆԵՊ-ի հիման վրա ձեռք բերված տնտեսական ու քաղաքական նվաճումները, խաղաղ տնտեսական շինարարությունն առաջ էր ընթանում ամբողջ թափով, հաջողությամբ վերականգնվում էին գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, տրանսպորտը, առևտուրը։ Ամրանում էր բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը, աճում էր երկրի տնտեսական, քաղաքական ու ռազմական հզորությունը, ինչպես նաև նրա դերն ու տեսակարար կշիռը միջազգային ասպարեզում։ Սովետական ռեսպուբլիկաների տնտեսական ու քաղաքական հզորացման հետ միասին, ուժեղ թափ էր ստացել նրանց ընդհանուր ջանքերի միացման համար սկսված միավորիչ շարժումը։ Անդրկովկասյան ռեսպուբլիկաներում համաժողովրդական բնույթ էր ընդունել Անդրֆեդերացիայի ստեղծման համար սկսված շարժումը։ Այդ շրջանում բուռն թափով աճում էին աշխատավորների քաղաքական ակտիվությունը, Կոմունիստական պարտիայի նկատմամբ նրանց տածած սերն ու համակրանքը, եղբայրության, ազգային համերաշխության, ինտերնացիոնալիզմի, հայրենասիրության զգացմունքները։ Ահա թե մոտավորապես ինչպիսի պայմաններում հրավիրվեց ու տեղի ունեցավ Հայաստանի Կոմպարտիայի առաջին համագումարը, որը պետք է ամփոփեր նրա պայքարի ու հաղթանակների արդյունքները և ուրվագծեր հերթական անելիքները։

* * *

Համագումարը բացվում է 1922 թ. հունվարի 26-ին, երեկոյան ժամը 8-ին, Երևանի Զինվորական ակումբի մեծ դահլիճում։ Պարտիական հիմնի կատարումից և հանդիսավոր բացումից հետո համագումարն ընտրում է նախագահություն, քարտուղարություն, մանդատային հանձնաժողով, ապա հաստատվում է Կենտկոմի կողմից ներկայացված օրակարգի նախագիծը և որոշվում է լսել նաև Կարմիր Բանակի քաղբաժնի ու Զտման կենտրոնական հանձնաժողովի ներկայացուցիչների ինֆորմացիաները։

Համագումարի օրակարգի հարցերն էին՝ 1. Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետվությունը, 2. Պարտիայի վարած քաղաքականության մասին, 3. Կազմակերպական խնդիրներ և Կենտկոմի կազմ. բաժնի զեկուցումը, 4. Զեկուցում Համառուսաստանյան պարտիական կոնֆերենցիայի մասին, 5. Սովետական շինարարության և Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիայի մասին. 6. Նոր տնտեսական քաղաքականությունը, 7. Հողային քաղաքականությունը և առաջիկա գարնանացանի աշխատանքները, 8. Կենտկոմի, վերստուգիչ հանձնաժողովի և այլ ընտրություններ։

Համագումարի աշխատանքների սկզբից ընթերցվում են ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի, ինչպես նաև Մոսկվայի՝ Սվերդլովի անվան և Արևելյան ժողովուրդների կոմհամալսարանների ուսանողների ող-

ղության հեռագրերը։ «Հայաստանի Կոմունիստական կուսակցության համագումարի նախագահությանը,—ասված է ՌԿ(բ)Պ ԿԿ-ի Կովկասյան Բյուրոյի ողջույնի հեռագրում,—Համառուսական Կոմունիստական կուսակցության կենտրոնական Կոմիտեի Կովկասյան բյուրոն ողջունում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը։

Մենք համոզված ենք, որ Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը քաջաբար կիրագործե իր վրա գրված պարտականությունը, հաստատելով Հայաստանում ամուր կոմունիստական իրավակարգ և եղբայրական անխախտ խաղաղություն։

Համառուսական Կ. Կ. Կ. Կ. Կովկասյան բյուրոյի կողմից

Օրջոնիկիձե...[1]։

Ընթերցվում են նաև ողջույնի այլ հեռագրեր։

Ապա՝ համագումարը պատվավոր նախագահ է ընտրում Կոմպարտիայի ու Սովետական պետության հիմնադիր, սովետական ժողովուրդների ու ամբողջ աշխարհի պրոլետարիատի առաջնորդ Վ. Ի. Լենինին, հանձնարարում է նախագահությանը՝ համագումարի անունից ողջույնի հեռագրեր ուղարկել Վրաստանի Կոմպարտիայի առաջին համագումարին, Ադրբեջանի Կոմպարտիայի Կենտկոմին և այլն, որից հետո անցնում է գործնական հարցերի քննարկմանը։

Ռեսպուբլիկական մամուլը, ողջունելով Հայաստանի Կոմպարտիայի առաջիկա համագումարը, լայնորեն արձագանքում է նրա աշխատանքներին ու լուսաբանում դրանց ընթացքը։ Այդ տեսակետից հետաքրքրական է ՀՍՍՌ հավաքական բրիգադայի քաղ. բաժնի օրգան «Կարմիր զինվոր» թերթի 1922 թ. հունվարի 27-ի առաջնորդողը։ Թվարկելով հունվարին Հայաստանում տեղի ունեցած պարտիական գավառային կոնֆերենցիաներն ու Սովետների գավառային համագումարները, թերթը նշում է, որ աշխատավորները ամենաակտիվ կերպով մասնակցեցին այդ հավաքներին, արտահայտեցին նոր կյանքի կառուցման իրենց պատրաստակամությունն ու վճռականությունը։ Այդ կոնֆերենցիաներն ու համագումարները ցույց տվեցին, որ աշխատավորները ճիշտ են հասկացել իրենց անելիքները՝ երկրի վերաշինության գործում. նրանք հասկացել են, որ միայն Կոմունիստական պարտիան իրենց կառաջնորդի դեպի երջանիկ ապագան, դեպի սոցիալիզմը։ Նշելով, որ աշխարհի ամենահզոր Կոմունիստական պարտիայի Հայաստանի կազմակերպությունն առաջին անգամ է համագումար ունենում, թերթը Կարմիր Բանակի անձնակազմի անունից հայտարարում է. «... Հ. Հ. Կ. բրիգադան ողջունում է Կ. կուսակցության Համանայաստանյան համագումարը և ասում. «Դուք ստեղծագործեցեք, դուք վերաշինեցեք, իսկ մենք ամեն րոպե պատրաստ ենք պաշտպանելու այդ բոլորը»։ Կեցցե Կոմունիստական կուսակցությունը»։

Համագումարում Կենտկոմի գործունեության քննարկման ժամանակ շոշափվեցին նաև 1920 թ. մայիսյան ապստամբության և Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց հետո մինչև փետրվարյան ավանտյու-

[1] «Խորհրդային Հայաստան», № 22, 28 հունվարի, 1922։

[2] «Կարմիր զինվոր», Երևան, № 5 (32), 27 հունվարի, 1922։

բան ՀԿ(բ)Պ Կենտկոմի վարած քաղաքականության հարցերը։ Համագումարը նշեց, որ մայիսյան ապստամբությունը իրոք ժողովրդական-մասսայական ռևոլյուցիոն շարժում էր և անհրաժեշտ էտապ՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման ճանապարհին։ Չնայած Արմենկոմի ու Հայաստանի Ռևկոմի տակտիկական առանձին սխալներին, Կոմունիստական պարտիան որպես առաջատար ուժ ղեկավարում էր Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմության փառավոր էջերից մեկը հանդիսացող այդ ապստամբությունը։ Համագումարի դելեգատների մեծ մասը գտնում էր, որ ՀԿ(բ)Պ Կենտկոմի և Հայաստանի Ռևկոմի քաղաքականությունը 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. փետրվարը, չնայած թույլ տրված որոշ սխալներին, հիմնականում ճիշտ էր։ Սխալ պետք է համարել մեզմ վերաբերմունքը դեպի դաշնակցության ազատ մնացած լիդերները, ակտիվ գործիչները և սպայական կազմը։ Համագումարն արձանագրեց, որ դաշնակցական ավանտյուրիայի ջախջախումից հետո ՀԿ(բ) պարտիան, շարունակելով դաշնակցական թափթփուկների լիկվիդացումը Զանգեզուրում, ժամանակին ձեռնամուխ եղավ պարտիայի Ա համագումարի որոշումների կենսագործմանը, իսկ մի շարք միջոցառումներից հետո ընդունեց պարենահարկին անցնելու դեկրետը և անցավ տնտեսական նոր քաղաքականության կիրառմանը։ Բացի այդ, հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Կոմունիստական պարտիան որոշակի հաջողություններ ձեռք բերեց հարևան պետությունների հետ նորմալ հարաբերությունների հաստատման ուղղությամբ։ Իր շարքերի զտման հետևանքով նա զգալի չափով մաքրեց պարտիական կազմակերպությունները անհարազատ ու վտանգավոր տարրերից և բավականաչափ ամրապնդվեց։

Պարտիայի զտման մասին համագումարում տված իր հարակից զեկուցման մեջ համագումարի դելեգատ Ս. Համբարձումյանը, հենվելով Լենինի մտքերի և պարտիայի X համագումարի համապատասխան որոշումների վրա, հայտարարեց, որ զտումը պարտիայի համար շատ կարևոր քայլ էր, որ այդպիսի քայլ կարող էր անել միայն Կոմունիստական պարտիան։

Պարտիայի ամրապնդման ու հերթական խնդիրների մասին ընդունած իր որոշման մեջ համագումարը նշեց, որ զտման ժամանակ պարզվեցին պարտիական օրգանների, պարտապարատի աշխատանքում տեղ գտած թերությունները, որոնց վերացման միակ պայմանը պարտիայի X համագումարի որոշումների անշեղ կիրառումն է։ Այնուհետև համագումարը կոնկրետ միջոցառումներ է նշում Կենտրոնական Կոմիտեի, գավկոմների, շրջկոմների ու սկզբնական պարտիական կազմակերպությունների փոխադարձ կապերի, վերադաս օրգանների կողմից ստորադասների նկատմամբ ղեկավարության կոնկրետացման ու ուժեղացման վերաբերյալ, ինչպես նաև պարտանդամների գաղափարական-քաղաքական մակարդակի բարձրացման ու պարտիայի շարքերի սոցիալական կազմի հետագա բարելավման մասին։

Ապա լսվում ու քննարկվում են ՌԿ(բ)Պ Համառուսաստանյան XI կոնֆերենցիայի և Անդրֆեդերացիայի մասին Ալ. Մյասնիկյանի զեկուցումները։

Հայտնի է, որ ՌԿ(բ)Պ Համառուսաստանյան XI կոնֆերենցիան տեղի ունեցավ Մոսկվայում 1921 թ. դեկտեմբերի 19—22-ին։ Կոնֆերեն-

ցիային մասնակցում էին 125 դելեգատ՝ վճռական և 116 դելեգատ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։ Կոնֆերենցիայի աշխատանքներին Անդրկովկասի պարտիական կազմակերպությունից մասնակցում էին Գ. Կ. Օրջոնիկիձեն, Մ. Մ. Կիրովը, Ա. Ռ. Մյասնիկյանը և ուրիշները։ Կոնֆերենցիան քննարկեց պարտիայի խնդիրները տնտեսության վերականգնման կապակցությամբ, մասնավորապես արդյունաբերության, գյուղատնտեսության, կոոպերացիայի, պարտիայի զտման նախնական արդյունքների, Կոմինտերնի և այլ հարցերը և կոնկրետ միջոցառումներ նշեց խոշոր արդյունաբերության ու գյուղատնտեսության վերականգնման, պետական ու կոոպերատիվ առևտրի ամրապնդման, ֆինանսների կայունացման, անդեֆիցիտ բյուջե ունենալու, պետական մանր ու միջակ ձեռնարկությունների մի մասը կոոպերատիվներին վարձակալությամբ տալու, տնտեսության իշխող բարձունքները պետության ձեռքում պմուր պահելու անհրաժեշտության և այլ խնդիրների վերաբերյալ։ Կոնֆերենցիան, ամփոփելով պարտիայի շարքերի զտման նախնական արդյունքները, կարևոր որոշում ընդունեց պարտիայի հետագա ամրապնդման մասին. բացի այդ, կոնֆերենցիան, քննարկելով Կոմինտերնի տակտիկայի հարցերը, հավանություն տվեց Կոմինտերնի Գործկոմի վարած քաղաքական գծին։

«Համառուսաստանյան պարտկոնֆերենցիայի մասին» տված իր զեկուցման մեջ Ալ. Մյասնիկյանը մանրամասն տալիս է կոնֆերենցիայի աշխատանքների վերլուծությունը և շարադրում դրանից բխող այն խնդիրները, որոնք կանգնած են Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ու աշխատավորության առաջ։ Ապա Մյասնիկյանը բնութագրում է այն պատճառները, որոնց հետևանքով պարտիան անցավ նոր տնտեսական քաղաքականության կուրսին (ՆԵՊ-ին)։

Մյասնիկյանն ասում էր, որ անցումը խաղաղ տնտեսական շինարարությանը Ռուսաստանում սկսվեց փաստորեն 1920 թվականին։ Պարտիայի IX համագումարի աշխատանքների առանցքը միասնական տնտեսական պլանով երկրի ժողովրդական տնտեսությունը վերականգնելու խնդիրն էր։ Սովետների VIII համագումարում այդ ուղղությամբ կատարվեց հաջորդ քայլը, իսկ պարտիայի X համագումարը, ելնելով փաստական իրադրությունից, խաղաղ տնտեսական շինարարության դիրքորոշում ընդունեց։

Նոր պայմաններում անհրաժեշտ էր միջոցներ ձեռնարկել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքն ամրապնդելու, ժողովրդական տնտեսությունը արագ կերպով վերականգնելու, սոցիալիստական շինարարությունը արագացնելու, սոցիալիզմի տնտեսական բազա ստեղծելու համար։ Հենց այդ նպատակով էլ պարտիայի X համագումարը կարևորագույն որոշում ընդունեց պարենմասնատրումից պարենհարկին անցնելու, ռազմական կոմունիզմի քաղաքականությունից նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու մասին։

Ալ. Մյասնիկյանը նշում է, թե պարտիայի X համագումարի որոշումներից ելնելով ինչպիսի նոր խնդիրներ ունեն կատարելու պարտիական, պրոֆմիութենական, կոմերիտական և այլ կազմակերպությունները։

Խոսելով ՆԵՊ-ի մասին, Մյասնիկյանը նշում է, որ Հայաստանում

նույնպես պետք է անշեղորեն կիրառել այդ քաղաքականությունը։ Ապա Մյասնիկյանը անցնում է Կոմինտերնի քաղաքականության, նրա տակտիկայի վերաբերյալ պարտիայի Համառուսաստանյան կոնֆերենցիայի որոշման ընութագրմանը, ինչպես նաև պարտզտման արդյունքների մասին կոնֆերենցիայի ընդունած բանաձևի բովանդակության շարադրմանը և կոչ է անում բոլոր ջանքերը գործադրել կոնֆերենցիայի որոշումները անշեղորեն կենսագործելու համար։

Համագումարը միահամուռ կերպով ընդունում է բանաձև, որտեղ ասված է. «Լսելով ընկ. Մյասնիկյանի զեկուցումը համառուսական պարտկոնֆերենցիայի մասին, համագումարը ամբողջովին միանում է կոնֆերենցիայի բոլոր որոշումներին և առաջարկում է Կենտկոմի նոր կազմին ու բոլոր պարտկազմակերպություններին, իրենց աշխատանքներում ղեկավարվել կոնֆերենցիայի բոլոր որոշումներով»[1]։

Սովետական շինարարության և Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիայի մասին տված զեկուցման մեջ Մյասնիկյանը կանգ է առնում պարտիայի ու սովետական օրգանների փոխհարաբերության վրա, նշում է, որ մինչև փետրվարյան ավանտյուրան Հայաստանում հաճախ շփոթվում էին նրանց ֆունկցիաները։ Զեկուցողը հիշեցնում է լենինյան այն դրույթը, որ պարտիան պետք է ղեկավար դեր կատարի պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, ուղղություն տա Սովետների աշխատանքին, գործի նրանց միջոցով։ Այնուհետև նա հանգամանորեն կանգ է առնում ռեսպուբլիկայի պարտիական ու սովետական կազմակերպությունների կողմից 1921 թ. ապրիլից մինչև 1922 թ. հունվար ամիսը ընկած ժամանակաշրջանում կատարված աշխատանքի արդյունքների վրա։ 1921 թ ապրիլ-հուլիս ամիսներին ուշադրության կենտրոնում էին պարենավորման ու Կարմիր Բանակի ամրապնդման, ինչպես նաև Զանգեզուրի դաշնակցական բանդաների լիկվիդացման հարցերը։ Հուլիսից մինչև աշուն ընկած շրջանում, երբ արդեն լրիվ ավարտվել էին քաղաքացիական կռիվները ռեսպուբլիկայում, ծավալվեցին խաղաղ տնտեսական շինարարության աշխատանքները։ 1921 թ. աշնան վերջերից մինչև 1922 թ. հունվարն ընկած ժամանակաշրջանում համեմատաբար աշխուժացան տնտեսական կազմակերպությունների աշխատանքները։ որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին տնտեսության վերականգնման, պարենհարկի ճիշտ կիրառման ու գանձման, առևտրի ու ապրանքաշրջանառության ընդարձակման, կոոպերացիայի գործունեության, ինչպես նաև մասսաներին կոմունիզմի, ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու, կուլտուրայի, լուսավորության բնագավառներում։ Պարտիայի ու կառավարության ձեռնարկումների շնորհիվ զգալիորեն բարելավվեց Հայկոոպի և բոլոր կոոպերատիվ միավորումների աշխատանքը և կոորդինացվեց նրանց գործունեությունը։ Ապա Մյասնիկյանը առաջ է քաշում կոոպերացիայի վրա ավելի մեծ ուշադրություն դարձնելու, պրոֆմիությունների դերի ճիշտ ըմբռնման և հետագա բարձրացման խնդիրները։ Նա խիստ քննադատության է ենթարկում Հողժողկոմատի գործունեությունը, նշում է, որ Հողժողկոմատը վատ է նա-

---

1 ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 233, թ. 18։

խապատրաստվում գարնանացանին, դեռ շատ քիչ գործ է արել գյուղացիներին սերմացուով, գյուղատնտեսական գործիքներով ու մեքենաներով օգնելու ուղղությամբ։ Թեև հրատարակված է հողային դեկրետը, ստեղծված են առանձին սովխոզներ և այլն, բայց դեռ վատ է ընթանում հոգաշինարարությունը, տեղ-տեղ ճիշտ չեն կիրառվում հողարաժանման սկզբունքները և երբեմն մեղմ քաղաքականություն է կիրառվում կուլակի նկատմամբ այդ հարցում։ Հայաստանի Կոմունիստական պարտիան,—ասում է Մյասնիկյանը,—պետք է բոլոր ջանքերը դործադրի գյուղատնտեսությունը արագորեն վերականգնելու համար։

Այնուհետև Մյասնիկյանը նշում է մյուս ժողկոմատների աշխատանքի թերությունները և կանգ է առնում արդյունաբերության մեջ սկսված աշխատանքների վրա («Արարատ» գործարանի, Ալավերդու գործարանի, կարբիդի գործարանի, Երևանի 2 կաշեգործարանների) և նշում առաջիկա խնդիրները։ Ամփոփելով ռեսպուբլիկայի պարտիական ու սովետական կազմակերպությունների գործունեության հանրագումարները, Մյասնիկյանը հանգամանորեն կանգ է առնում Անդրֆեդերացիայի ստեղծման ճանապարհին նացիոնալ-ուկլոնիստական տարրերի հարուցած արգելքների, դրանց հաղթահարման ու այլ հարցերի վրա։ Նա ցույց է տալիս, որ նացիոնալիստները դեմ են արտաքին առևտրի միացյալ օրգանի և Անդրկովկասյան միասնական երկաթուղային վարչական կենտրոնի ստեղծմանը, մաքսային արգելքների վերացմանը, սահմանների կանոնավորմանը և այլն։ Նա հիշեցնում է, որ ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, հակառակ նացիոնալ-ուկլոնիստների, այդ հարցերը բարենպաստ կերպով լուծել է, բայց տեղերում դեռ զգալի չափով դրսևորվում են նացիոնալիստական տենդենցներ, որոնց իսպառ ջախջախումը Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների անհետաձգելի խնդիրն է։

Մյասնիկյանը առաջարկում է ուժեղացնել պայքարը նացիոնալիզմի դեմ, ստեղծել միասնական բռունցք և երկրամասը արագորեն դուրս բերել տնտեսական քայքայումից։ Արտահայտելով համագումարի դելեգատների կամքը, Մյասնիկյանը հաստատ հույս է հայտնում, որ Անդրկովկասի բոլոր երեք ռեսպուբլիկաների պարտիական համագումարներն ու Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը անպայման դրական կերպով կլուծեն Անդրֆեդերացիայի ստեղծման խնդիրը։

Համագումարում ծավալված մտքերի փոխանակության ժամանակ վեր են հանվում ռեսպուբլիկայի պարտկազմակերպությունների աշխատանքում տեղ գտած թերությունները, բերվում են սովետական պետական օրգանների ֆունկցիաների մասին մշակված օրինագծի խախտման փաստերը, առաջ են քաշվում Սովետների և մասնավորապես կոոպերացիայի նկատմամբ պարտկազմակերպությունների ղեկավարության ուժեղացման խնդիրները։ Դատապարտելով պարենհարկը անհապաղ դրամական հարկով փոխարինելու սխալ ու վնասակար պահանջի կողմնակիցներին, համագումարը խնդիր է դնում ճիշտ ըմբռնել ՆԵՊ-ի խնդիրները և անսխալ կերպով կենսագործել դրանք։ Համագումարը մերժում է պարենհարկը բռնի ուժով գանձելու և կոոպերացիան կարմիր սպեկուլյանտ համարելու վերաբերյալ դելեգատ Ամ. Սահակյանի անընդունելի պնդում-

ները։ Համագումարն ընդգծում է, որ աշխատավորությունը ջերմորեն ողջունել է ՆԵՊ-ը, մասնավորապես պարենհարկի վերաբերյալ քաղաքականությունը, ինչպես նաև կոոպերացիան թշնամական տարրերից մաքրելու և կոոպերացիայի բոլոր ձևերի (հատկապես սպառկոոպերացիայի և գյուղատնտեսական կոոպերացիայի) զարգացման ու արմատացման անհրաժեշտությունը։ Համագումարը դատապարտում է այն երևույթը, երբ տեղական պետական որոշ օրգանների, մասնավորապես Հողժողկոմատի ներկայացուցիչների վատ աշխատանքի հետևանքով, հողրաժանության հարցում թույլ են տրվում սխալներ, որոնցից շահում է կուլակը։ Պետք է միջոցառումներ մշակվեն վարձու աշխատանքի կիրառման ժամանակ կուլակների շահագործողական տենդենցները սահմանափակելու և բատրակների շահերը պաշտպանելու ուղղությամբ։

Համագումարը բանաձևեր է ընդունում քննարկված բոլոր հարցերի վերաբերյալ։ Մյասնիկյանի «Սովետական շինարարության և Անդրֆեդերացիայի մասին» զեկուցման առթիվ ընդունված բանաձևում նշվում է, որ համարյա մի ամբողջ տարի Հայաստանում Սովետական իշխանությունը կազմակերպորեն հենվում էր ռևկոմների վրա։ Ռևկոմների, այսինքն՝ իշխանության ոչ ընտրովի օրգանների սիստեմի գոյությունը թելադրված էր ռեսպուբլիկայում կոնտրռևոլյուցիոն ելույթների, քաղաքացիական պատերազմների առկայության, պատերազմների հետևանքով բնակչության և երկրի տնտեսական կյանքի քայքայվածության և այլ հանգամանքներով։ Բայց երբ փոխվեց այդ արտակարգ դրությունը, վերջացավ քաղաքացիական պատերազմն ու նրա հետ կապված լարված իրադրությունը, անցում կատարվեց դեպի խաղաղ տնտեսական շինարարությունը և պայմաններ ստեղծվեցին ռևկոմների սիստեմի վերացման, ընտրովի Սովետների անցնելու համար։ Այժմ ռեսպուբլիկան ծածկված է Սովետների, Սովետական իշխանության ընտրովի օրգանների լայն ցանցով։ Պարտիայի խնդիրն է՝ Սովետների միջոցով բանվորագյուղացիական լայն մասսաներին մասնակից դարձնել պետության կառավարմանը, գլխավորել նրանց ստեղծագործական աշխատանքը։ Պարտիան պետք է Սովետների միջոցով իրականացնի պրոլետարիատի դիկտատուրան, քանի որ նա այդ դիկտատուրայի ղեկավար, ուղղություն տվող ուժն է։ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները պետք է լավ պատկերացնեն պարտիայի ու Սովետական իշխանության փոխհարաբերությունները և չշփոթեն նրանց ֆունկցիաները։ Ռեսպուբլիկայում Սովետական իշխանության կազմակերպական ուժը ամրապնդելու նպատակով համագումարը որոշում է՝ 1. կրճատել ժողովրդական կոմիսարների բաժինների քանակը, 2. ուժեղացնել ժողկոմատների կոլեգիաները, 3. ապահովել իշխանության օրգանները որակյալ կադրերով, 4. բարելավել կենտրոնի և տեղական օրգանների փոխադարձ կապերը, 5. զեկավար աշխատողներին հաճախ ուղարկել տեղերը և այլն։ Համագումարը մատնանշում է, որ Հայաստանում սովետական կարգերի կազմակերպվածությունն ու ամրապնդումը ներկա պայմաններում կախված է Վրաստանի ու Ադրբեջանի

[1] ՄԷԿՍԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 233, թ. 26—27 թ.։
[2] Նույն տեղում, էջ 23։

հետ անհրաժեշտ սերտ կապից. ուստի և Անգրֆեդերացիայի ստեղծումը լրիվ համապատասխանում է մեր երկրի ժողովուրդների շահերին։

Ճիշտ է, առանձին օրակարգով չքննարկվեցին կուլտուր-լուսավորական-քաղաքատիարակչական ու գաղափարական հարցերը, բայց համագումարը անդրադարձավ նաև այդ հարցերին, լուսաբանվեց այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը և մշակվեցին համապատասխան միջոցառումներ։ Հայտնի է, որ սովետական կարգերի հաստատումից հետո պարտիան կազմակերպեց ու ապահովեց պետության կողմից կուլտուր-լուսավորական հաստատությունների աղգայնացման, գիտա-հետազոտական հիմնարկների ստեղծման, մասսաների քաղաքական, կուլտուրական մակարդակի բարձրացման, կոմունիստական դաստիարակության գործը։ Պարտիայի ու Սովետական կառավարության ուշադրության կենտրոնում գտնվող հարցերից էր դպրոցաշինարարությունը, դպրոցական հասակ ունեցող երեխաներին մաքսիմալ չափով դպրոցում ընդգրկելու, մեծահասակների անգրագիտությունը վերացնելու, կիսագրագետների համար դպրոցներ բաց անելու, քաղգրագիտական դպրոցների ցանցը ընդարձակելու և բազմաթիվ այլ հարցեր։ Սովետական իշխանության հաստատումից հետո, երբ պարտիայի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ աղգայնացվեցին դպրոցները, եկեղեցին անջատվեց պետությունից, իսկ դպրոցը եկեղեցուց, Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը ժողկրթության գավառային ու շրջանային բաժինների միջոցով վերսկսեց դպրոցական պարապմունքները։ Այնուհետև լայն աշխատանք սկսվեց դպրոցների շենքերը վերականգնելու, նոր դպրոցներ բացելու, ուսուցչական կադրերով և գրենական ու դասական պիտույքներով դպրոցներն ապահովելու ուղղությամբ։ Փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացումից հետո դպրոցական ցանցի ընդարձակման ուղղությամբ տարվող աշխատանքները լայն թափ ստացան։ Ռեսպուբլիկայի Լուսժողկոմատի տվյալներով առ 1921 թ. նոյեմբերի 29-ը Հայաստանում գործող դպրոցների թիվը հասնում էր 370-ի, որտեղ աշխատում էին մոտ 988 ուսուցիչ և սովորում էին մոտ 35 հազար աշակերտ. բացի այդ, նախատեսվում էր բացել վերանորոգման պրոցեսում գտնվող 140 դպրոց, որոնցում պետք է սովորեին մոտ 15 հազար աշակերտ։ Չնայած այդ դրական գործերին, այնուամենայնիվ դաշնակների ու նրանց արտասահմանյան տերերի հանցանքով կատարված ավերածությունները, ժողովրդական տնտեսությանը հասցված խորը վերքերը և այլն հնարավորություն չէին տալիս խոշոր միջոցներ տրամադրել դպրոցական գործի համար, թեև արվում էր հնարավոր ամեն բան, բայց միջոցների սղության պատճառով ռեսպուբլիկայի դպրոցահասակ երեխաների մոտ 2/3-ը դեռևս դուրս էր մնում դպրոցից։ Բացի այդ, զգացվում էր լարորատոր սարքավորումների, դասագրքերի, որակյալ կադրերի (մասնավորապես մասնագիտական-տեխնիկական դպրոցների) սուր պակասություն։ Այդ նույն ժամանակ պարտիան ու կառավարությունը զգալի աշխատանք էին կատարել բնակչության քաղաքական լուսավորության և անգրագիտության վերացման ուղղությամբ։ Այդ տեսակետից կարևոր դեր էին կատարում գրագիտական, քաղգրագիտական և պարտիական դպրոցները, ինչպես նաև գրադարանները, խրճիթ-ընթերցարանները, ակումբները, թատրոնը, կինոն, դասախոսությունները, զեկուցումները, մամուլը և այլն։ Այդ ժամանակամիջո-

ցում գրագիտական դպրոցների թիվը հասնում էր 80-ից մինչև 180-ի, իսկ նրանց ունկնդիրների թիվը՝ 3600-ի, քաղդրագիտական դպրոցների թիվը հասնում էր 28-ի, պարտդպրոցներինը՝ 4-ի, խրճիթ-ընթերցարաններինը՝ 270-ի, ագիտկայաններինը՝ 4-ի[1] և այլն։

Այդ շրջանում առաջին նվաճումներն էին ձեռք բերել հենց նոր ստեղծված գիտահետազոտական հաստատություններն ու մի շարք կուլտլուսավորական հիմնարկներ, մասնավորապես Էջմիածնի գիտական ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Հայաստանի թանգարանը, ձևավորվող հանրային գրադարանը և այլն։

Համագումարում այս կամ այն չափով շոշափվեցին այս հարցերը և նշվեցին գործնական միջոցառումներ հետագա աշխատանքների համար։

Այդ տարիներին իդեոլոգիական աշխատանքի գլխավոր խնդիրներն էին պարտիայի X համագումարի, Համառուսաստանյան պարտիական կոնֆերենցիայի որոշումների մասսայականացումը, պայքարը հակալենինյան ուղղությունների՝ տրոցկիզմի և օպոզիցիայի բոլոր այլ դրսևորումների դեմ, բուրժուական ու բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, հատկապես դաշնակցության դեմ։ Այդ տեսակետից վերին աստիճանի կարևոր դեր էին կատարում մամուլը, գրականությունը, բանավոր և գրավոր պրոպագանդան ու ագիտացիան։

Դաշնակցության դեմ գաղափարական ու քաղաքական պայքարը գնալով ուժեղանում էր։ Այդ պայքարը մղվում էր հատկապես մամուլում ու գրականության մեջ, ամենօրյա պարտիական քաղաքական աշխատանքների և բազմաթիվ այլ միջոցներով։ Հրապարակվում էին դաշնակցության հակաժողովրդական էությունը մերկացնող փաստաթղթեր ու հոդվածներ։ Այդ ուղղությամբ խոշոր աշխատանք էին կատարում Մյասնիկյանը, Մռավյանը և ուրիշները, որոնք հոդվածներով և առանձին աշխատություններով բացահայտում էին դաշնակցության դասակարգային պատկանելությունը, մերկացնում այդ պարտիայի իդեոլոգիայի բուրժուա-նացիոնալիստական էությունը և կոչ էին անում վառոդը միշտ չոր պահել հայ ժողովրդի այդ ոխերիմ թշնամու դեմ։

Նշելով պարտիայի X համագումարի, Համառուսաստանյան XI կոնֆերենցիայի, պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ու Սովետական կառավարության որոշումների մասսայականացման, ինչպես նաև Լենինի ու նրա հավատարիմ զինակիցների հոդվածների, ելույթների, զեկուցումների թարգմանության ու հրատարակման գործում ձեռք բերված շոշափելի նվաճումները, տրոցկիզմի ու հակալենինյան այլ ուղղությունների դեմ պարտիայի մղած պայքարի արդյունքները, համագումարը խնդիր դրեց էլ ավելի բարձրացնել իդեոլոգիական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքների մակարդակը ռեսպուբլիկայում։

Համագումարն ընտրեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտե բաղկացած 17 անդամից ու 5 թեկնածուից, ինչպես նաև Կենտրոնական Վերահսկիչ ու Վերստուգիչ հանձնաժողովներ։ Կենտկոմի կազմում ընտրվեցին Ալ. Մյասնիկյանը, Ա. Մռավյանը, Արտ. Կարինյանը, Աշ. Հովհաննիսյանը, Շ. Ամիրխանյանը, Ա. Շահգելդյանը,

[1] Տես «Խորհրդային Հայաստան», № 224, 1921, նոյեմբերի 29։

Ս. Էվոյանը և ուրիշներ։ Այնուհետև տեղի ունեցավ Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարի դելեգատների ընտրությունը։ Դելեգատներ ընտրվեցին Ալ. Մյասնիկյանը, Ս. Համբարձումյանը, Սիմակը, Կարապետ Կարապետյանը, Շ. Ամիրխանյանը և ուրիշներ։

Համագումարի վերջին նիստում բուռն ծափահարությունների տակ ընթերցվում է Վրաստանի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարի հետևյալ ողջույնի հեռագիրը՝ ուղղված Հայաստանի Կոմպարտիայի առաջին համագումարին։

«Վրաստանի Կոմպարտիայի առաջին համագումարը եղբայրական ողջույն է հղում Հայաստանի Կոմպարտիայի առաջին համագումարին և հաստատ համոզմունք է հայտնում, որ ձեր հաստատուն ղեկավարությամբ Հայաստանի աշխատավոր ժողովրդի բազմաչարչար մասսաներին կհաջողվի շիկացած երկաթով այրել դաշնակցական անիծյալ ժառանգության մնացորդները և դնել իր ազատ կյանքի հիմքերը Սովետական Անդրկովկասի ազատ ժողովուրդների ընտանիքում։

Համագումարի նախագահ՝ ՄԱԽԱՐԱՁԵ[1]»։

Նույնպիսի ջերմությամբ համագումարը ողջույնի հեռագրեր է ուղարկում Վրաստանի Կոմպարտիայի համագումարին, Ադրբեջանի Կոմպարտիայի Կենտկոմին և այլն։

Իր աշխատանքներն ավարտելուց հետո համագումարը փակվում է Ինտերնացիոնալի հնչյունների տակ։

Մեծ է Հայաստանի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարի նշանակությունը։ Մինչև առաջին համագումարը, Հայաստանի Կոմունիստական պարտիան չուներ իր ընտրովի Կենտրոնական Կոմիտեն։ Համագումարը նախ և առաջ նշանավոր է նրանով, որ այնտեղ ստեղծվեցին ընտրովի ղեկավար օրգաններ (Կենտկոմը, Կենտրոնական Վերահսկիչ և Վերստուգիչ հանձնաժողովները) և դրանով իսկ Հայաստանի Կոմունիստական պարտիան լիովին վերակառուցվեց դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով։

Համագումարը ամփոփեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի նախընթաց գործունեության արդյունքները և պարտիայի XI համագումարի ու Համառուսաստանյան XI կոնֆերենցիայի որոշումների հիման վրա միջոցառումներ նշեց առաջիկա գործնական աշխատանքների համար։ Մանրամասն կերպով վերլուծելով նախասովետական ժամանակաշրջանի, 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. փետրվարն ընկած շրջանի և փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից մինչև համագումարն ընկած ժամանակաշրջանի գործունեությունը, համագումարը նշեց Արմենկոմի և ապա Կենտկոմի թույլ տված առանձին սխալները, հավանություն տվեց պարտիայի վարած գլխավոր քաղաքական գծին։ Համագումարը հանձնարարեց նորընտիր Կենտկոմին՝ հենց այդ ոգով էլ դիմել պարտիական ու անպարտիական մասսաներին և լայնորեն պարզաբանել անցյալի դասերը։ Միաժամանակ համագումարը, հանրագումարի բերեց խաղաղ տնտեսական շի-

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 233, թ. 30։

նարարության առաջին արդյունքները և որոշեց այսուհետև էլ շարունակել ՆԵՊ-ի անշեղ կենսագործումը, ընդգծելով, որ առանց դրա՝ անհնարին է երկրի տնտեսական վերականգնումն ու սոցիալիզմի հիմքի կառուցումը։ Համագումարը մշակեց այն մեթոդներն ու եղանակները, որոնցով ռեսպուբլիկան ՆԵՊ-ի ճանապարհով պիտի առաջ ընթանար դեպի սոցիալիզմ։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարը ջախջախելով նացիոնալիզմի առանձին տենդենցները, միահամուռ կերպով ողջունեց Անդրֆեդերացիայի ստեղծման իդեան և որոշեց ամեն կերպ արագացնել ֆեդերացիայի ստեղծումը։ Դրանով Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները ցույց տվեցին իրենց անդաշտ վերաբերմունքը նացիոնալիստական և հակալենինյան ամեն մի դիրքորոշման նկատմամբ և դրսևորեցին լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության ճիշտ ըմբռնման ու կենսագործման վճռականություն։

* * *

Հայաստանի Կոմպարտիայի առաջին համագումարի որոշումները պայքարի ու աշխատանքի կոնկրետ ծրագիր դարձան ռեսպուբլիկայի պարտիական, սովետական, պրոֆմիութենական, կոմերիտական ու հասարակական բոլոր կազմակերպությունների, ինչպես նաև ամբողջ աշխատավորության համար։ Գոտեպնդված հիշյալ համագումարների որոշումներով, Հայաստանի Կոմունիստական պարտիան հաջողությամբ գլխավորեց ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման, Անդրկովկասի սովետական մյուս ժողովուրդների եղբայրական կապերի ամրապնդման ուղղությամբ մղվող պայքարը։